ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/107

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11063-2019 գրությամբ «Քոփի Փրինթ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.06.2019թ. թիվ ՊՆ/02/1034-2019 գրության հիման վրա, 02.07.2019թ. «Քոփի Փրինթ»

ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 28.06.2019թ. թիվ ՊՆ/02/1034-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին չափաբաժնում «Քոփի Փրինթ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս ծանուցվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ, սակայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով ընթացակարգի համակարգողի էլեկտրոնային հասցեին «Քոփի Փրինթ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն, որով վրջինս հրաժարվում է պայմանագիր կնքելուց:»:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները կից ներկայացրել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով ընթացակարգի «Քոփի Փրինթ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

3. <u>«Քոփի Փրինթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 04.07.2019թ. գրությամբ դիմել է «Քոփի Փրինթ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11063-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/107 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար տպագրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Քոփի Փրինթ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը որոշել է ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Քոփի Փրինթ» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովի 06.06.2019թ.-ի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Մասնակիցը ճանաչվել է ընտրված/հաղթող/ մասնակից և վերջինիս 12.06.2019թ.-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Մասնակիցը պայմանագրի նախագծի ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը:

Մասնակցի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի պետի տեղակալ Ա. Բաղրամյանին ուղղված գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից ուղարկված N ԳՀԾՁԲ-12/7-1 պայմանագրի նախագիծը Ընկերության կողմից չի հաստատվելու, քանի որ նախագծի տեխնիկական բնութագրում նշված չի, որ պետք է տեղադրվի մետաղական կոնստրուկցիան և 6 ամիս այն պետք է պահպանվի, որի վերաբերյալ պահանջ չի սահմանվել հրավերով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ.-ի թիվ 26/26-1/11063-2019 գրությամբ «Քոփի

Փրինթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի

նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում,

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տպագրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Քոփի Փրինթ» ՍՊԸ-ն և Հանձնաժողովի 06.06.2019թ.-ի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշման հիման վրա ճանաչվել է ընտրված/հաղթող/ մասնակից:

12.06.2019թ.-ին Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, այն է՝ ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը:

Տվյալ դեպքում ընտրված/հաղթող/ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել պայմանագիրը և վճարման պահանջագիրը, որպիսի պայմաններում այդ հանգամանքը համարվում է որպես պայմանագիր կնքելուց հրաժարում, որը նախատեսված է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Քոփի Փրինթ» ՍՊԸ-ն, որպես ընտրված/հաղթող/ մասնակից,

հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը և վճարման պահանջագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ.-ի թիվ 26/26-1/11063-2019 գրությամբ «Քոփի Փրինթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Քոփի Փրինթ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**